նոյն ժամանակ կատարածն է Ղեւոնդի Պատմութեան։ Ասոր պիտի յաջորդէր վերջաբանութիւն մը, զոր ես կը համարիմ Ողբս իւր երկրորդ խմբագրութեան մէջ։

9· Ողբս ունի իր մէջ անհարազատ տաբրներ, որոնք մուծուած են հոն օտար ձեռքէ։ Այս տաբրները մուտ գտած են Ողբին մէջ այն ժամանակ, երբ այն բաժնուելով Ղեւոնդի Պատմութենէն միացուած է Հայոց Պատմութեան իբրեւ աւարտաբանութիւն Գ· գրքին։ Բարեբախտաբար անոնք մեծ թուով չեն· եւ մուծուած են այնպիսի անճարակ ձեռքով եւ անճաշակ ձեւով, որ քիչ մը ուշադիր աչք անաչխատ կարող է տեսնել թէ եկամուտ են անոնք։ Ներմուծութիւնս կատարուած է Խոր· Գ· 62 գլխոյն ազդեցութեան տակ, Ողբին եւ Մ· Խորենացւոյ Հայոց Պատմութեան մէջ կամուրջ մը ձգելու նպատակաւ։

Ներմուծուած են հետեւեալ ընդգծուած բառերը·

«Մինչ նոքա («նա») զմերն («զինն») յուսային զդարձ եւ պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիւս եւ կատարելագոյն յարմարութեամբս, համայն եւ մեք («իսկ եւս») փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ· յուսայաք («յուսայի») հարսանեաց պարել [պարս], անվեհեր երագութեամբ կրթեալք, եւ առագաստի ասել երգս, արդ··· հառաջեմ··· (էջ 361)։

Ընդգծեալ բառերու մէջ ակնբախ են անծանօթ գրչին անճաշակ փոփոխութիւնները եւ յաւելուածները։ Ողբերգուն կը խօսէր իր անձի մասին եզակի եւ նկատի ունէր հովիւը։ Անծանօթ ձեռքը իւր նպատակին համար բաւական համարած է եզակի դէմքն փոփոխել յոգնակիի, բայց ոչ ճշգրիտ հետեւողականութեամբ· այսպէս «զմերն» ընթերցուածին քով անփոփոխ պահած է բնագրին «իմովս» եւ «մեք»ը շարունակութեան մէջ ունի «հառաջեմ»· եւ քիչ յետոյ՝ «ով ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս» եւն։

Տողերուս եկամուտ ըլլալու ապացոյց է եւ այն հանգամանքը, որ անոնք կը բացակային Գրիգոր Նարեկացւոյ ի Մելիտոս ճառին մէջ, որ հոս նմանութեան օրինակ ծառայած էր Ողբերգուին (հմմտ· վերը, էջ 29)։

Ներմուծողին ձեռքէն է նաեւ Ողբին վերնագիրը։

*

10· Մեր քննութեան արդիւնքը կրնանք ամփոփել այսպէս·

ա· Մովսէս Խորենացւոյ «Հայոց Պատմութեան» վերջը (Գ· 68) գտնուած Ողբը իւր բովանդակութեամբը անյարիր է տեղւոյն եւ ժամանակին· այն չի կրնար «Հայոց Պատմութեան» վերջաբանը նկատուիլ։

բ· Բնական երեւոյթներու, քաղաքական եւ բարոյական կեանքի հանգամանքներու մասին հաղորդուած տեղեկութիւնները կ'ակնարկեն Ը· դարու երկրորդ կէսին (750—774) դիպուածները, այնպէս ինչպէս նկարագրած են զանոնք Սուսն-Դիոնեսիոս Թել-Մահրեցի եւ Ղեւոնդ երէց։ Ողբը գրուած է 774ին։

գ· Ողբը սկզբնաբար յօրինուած է իբրեւ վերջաբանութիւն Ղեւոնդ երէցի Պատմութեան առաջին մասին (գլ· ԼԳ)։

դ· Ողբին ոճը, բառամթերքը, ասութիւնները ունին մեծ նմանութիւն Ղեւոնդի Պատմութեան հետ· ողբերգուն օգտուած է այն գրականութենէն որ գտնուած է Ղեւոնդին ձեռքը։ Ղեւոնդ է Ողբին հեղինակը։

ե· Ողբս 790ին, երբ Ղեւոնդ իւր Պատմութեան կցեց 774—790 տարիներու դիպուածները, տեղափոխուեցաւ Պատմութեան Բ· մասին վերջը, զոյն փոփոխութիւններով։

զ· «Հովիւն» եւ «Հովուակիցը» հաւանօրէն կ'ակնարկեն Սիոն եւ Եսայի Կաթողիկոսները։

է· Մովսէս Խորենացւոյ «Հայոց Պատմութիւնը» լոյս տեսած է յընթացս 790—810 տարիներուն։ Որովհետեւ այն անաւարտ, ուստի առանց վերջաբանի մնացած էր, երկրորդ ձեռք մը Ղեւոնդի Պատմութեան վերջաբանը փոխադրած է «Հայոց Պատմութեան» վերջը։ Այս փոխադրութեան ժամանակ մուծուած են մանր փոփոխութիւններ եւ յաւելուածներ, որոնք չօշափելի են։

Հ· Ն· ԱԿԻՆԵԱՆ

ՆՈՐԻՑ ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑՈՒ ՄԱՍԻՆ

«Արարատ» ամսագրի 1919 թուի Յունուար—Դեկտեմբեր միացեալ համարում[1] հրատարակել էինք «Գրիգորիս Աղթամարցի» վերնագրով յօդուածը, ամփոփելով կենսագրական-մատենագրական այն նորութիւնները, որ մինչ այդ անյայտ էին բանասիրութեան։ Այժմ Հ· Ներսէս Ակինեանի մի նամակից (4 Յուլ· 1929 թ·) տեղեկանալով, որ նա զբաղուած է Աղթամարցու կենսագրութեամբ եւ տպերի հրատարակութեամբ, կամենում ենք գործի լրութեան մասամբ օգնած լինելու համար, մատչելի դարձնել այն նիւթերը, որ յաջողուել է մեզ ձեռք բերել անցողակի կերպով՝ վերոյիշեալ յօդուածի հրատարակութիւնից յետոյ։ Մեր ասելիքը վերաբերում է Աղթամարցու կենսագրութեան միայն եւ ոչ բանաստեղծական երկերի կամ նրանց գնահատութեան[2]։

*

1· Աղթամարցու մանկութեան եւ երիտասարդութեան մասին ոչինչ գիտենք, թէպէտ բազմաթիւ են աւագ ժամանակակից գրիչներն իրենց յիշատակարաններով· նրա կեանքի հետ կապուած առաջին թուականներն իմանում ենք իւր իսկ գրուածներից, այն է 1515, 1519, 1523[3]· սրանց վերայ պէտք է աւելացնենք 1516 թուականը, երբ նա ծրել է Մարինոս ճգնաւորի կեանքը ոտանաւորով· «ի Գրիգորիս Աղթամարցւոյ արարեալ ոտանաւոր զվարս Մարինոս սուրբ ճգնաւորին· Անծին եւ անբսկիզրն հաւրէն»[4]։ Ոտանաւորի վերջին տներն են·

Ի թուականիս հայոց լինըն հարիւրի
Կ· եւ Ե· տարի ի նմայ աւելի,
Ես Գրիգորիս նըբաստրս Աղթամարցի
Ապիկարըս տեսուչ եւ անյիշելի։

Ըզվարըս ճըգնութեան սուրբ Մարինոսի
Ոտնաչափ համառաւտ ի յաւարտ ածի,
Զի ընթերցմամբ սորայ զուարճանայք յոգի,
Փառս երգեսցուք Փըրկչին ամենազաւրի։

Առ յոտս երջանիկ բարունապետի
Գրիգորիոս անուն արթուն հրսկաւղի,
Քաջ հրեատոր անյաղթ փիլիսոփայի
Եւ երիցս երանեալ մեծ վարժապետի։

Եւ որք եղանակէք ի մէջ հանդիսի
Եւ յիշման արէք ըզմեզ արժանի,
Եւ ձեզ ողորմութիւն տեառնէն պարգեւի
Ի սոսկալի աւուր մեծ դատաստանի։

Այստեղ յիշատակուած ենք տեսնում ոմն Գրիգորիոս բարունապետի, «քաջ հռետոր, անյաղթ փիլիսոփայի եւ երիցս երանեալ մեծ վարժապետի» անունը· երեք տարի յետոյ նա կրկին յիշում է սրա անունը Աստուածատուր Խթայեցուն նուիրած ոտանաւորի մէջ։ Այս երկու ոտանաւորից պարզ է, որ նորա ուսուցիչն էր ոմն բարունապետ Գրիգոր, որին այնքա՛ն մեծ յարգանք է տածում մեր տաղասաց «տեսուչ» Գրիգորիսը· սոյն բարունապետի հետ նոյն ենք համարում 1499 թուին գրուած մի մաշտոցի յիշատակարանի «մեծ հռետոր Գրիգոր»ը· ձեռագրի գրիչն է Թումայ քահանայ, որդի Գրիգոր քահանայի եւ Քրման Խաթունի, հօրեղբայրն է «հուշակաւոր քարտուղար Թումայ կրօնաւորն, որ մականուն Կոռնով կոչի», բոլորն էլ յայտնի եւ նշանաւոր հանդիսացած Աղթամարի գրչութեան գպրոցի պատմութեան մէջ։ Այս մաշտոցն էլ գրուած է «յաստուածաբնակ կղզիս Աղթամար··· ի սուրգ եւ յընտիր աւրինակէ, զոր սրբագրեաց եւ փարթամացոյց մեծ հռետորն Գրիգոր վարդապետն, քաջն եւ արին[5]։ Զուսենայինք մենք Գրիգորիս Աղթամարցու յիշատակութիւնները «բարունապետ», «քաջ հռետոր», «մեծ վարժապետի» մասին, հակուած կը լինէինք Թումայ քահանայի յիշատակարանի «մեծ հռետորն Գրիգոր վարդապետն, քաջն եւ արին» նոյնացնել տաղասաց Գրիգորիսի հետ։ Բայց երբ վերջինս նոյն ածականներով որակում է իւր նոյնանուն ուսուցչին, պարզ է երկու Գրիգորների նոյնութիւնը։ Մենք աւելի կարեւոր ապացոյց ունինք, որ Թումայի յիշատակարանի «մեծ հռետորը» նոյն չէ տաղասացի հետ· յիշատակարանի Գրիգորի համար ասուած է, թէ «սրբագրեաց եւ փարթամացոյց» այս մաշտոցը· «փարթամացոյց» բառով ձեռագրի նկարազարդութիւնն է ակնարկուած· համեմատելով սրա եւ Գրիգորիս

փոխարէն կը բռնագրաւէին աւատական երկրատէրերու հողերը, եւ գիւղացիութեան աշխատանքի արդիւնքը կը հոսեցնէին արքունի գանձարանը։ Սակայն հարգելի կարենայ ազատել բռնագրաւումէ եկեղեցապատկան գիւղերն եւ եկեղեցւոյ հարկատու գիւղացիութիւնը։ Հմմտ· առ այս Յ· Զօրեան, Արարատեան գիւղի մէջ։ Ասիոյ Հայաստանի քաղաքի եւ գիւղի մէջ։ ստեղծուած Հակադրութիւնը։ Տեղեկատու։ Երեւան, 1927, թ· 2, էջ 180—182։ Դժբախտաբար Ղեւոնդի այս կարեւոր տեղիքը նկատի չէ առնուած հոն։

Ուշադրութեան արժանի է Պարսաւի 768ի ժողովի կանոններու ԺԳ· հատուածը ուր կ'ըսուի· «որք··· ի նեղութենէ հարկաց անձինքն հանեն ի վաճառ եւ ստակաւ ինչ ի գոյութեան լինի, եւ վաճառեսցէ զեկեղեցի կամ զսպաս սրբութեան, կամ ի կարասեաց, կամ յանդաստանաց եկեղեցւոյ, նզովեսցի յԱստուծոյ եւ ի մէնջ» (Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս 1914, էջ 169)։

[1] «Արարատ»ի վերջին համարն էր այդ, որից յետոյ դադարել է ամսագիրը։

[2] Ցաւում ենք, որ ձեռքի տակ չունինք Հ· Ակինեանի Աղթամարի Գաւազանագիրքն (Վիեննա, 1920) ու Աղթամարցուն նուիրած յօդուածը «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ (1915, էջ 18—64)· զուցէ աւելորդ կը լինէին որոշ տեղեկութիւններ, որ տալիս ենք այստեղ։

[3] Կ· Կոստանեան, Գրիգորիս Աղթամարցի եւ իւր տպերը, Թիֆլիս 1898, եր· 86, 91, 53։

[4] Ձեռ· էջմ· թ· 2672, 371ա, Գանձարան, գրուած Ստեփանոս Թոխաթցու ձեռքով 1609 թուին։

[5] Ձեռ· էջմ·, թ· 1684։

© National Library of Armenia

տաղասացի նկարչութիւը, որի մասին խօսք կը լինի քիչ յետոյ, գտնում ենք ունակութեան եւ արուեստի մեծ տարբերութիւն. տաղասացի նկարչութիւնը շատ աւելի արժէքաւոր է, քան մեծ հռետոր Գրիգոր վարդապետինը: Այսպիսով ապացուցուած պիտի համարել տաղասացի ուսուցիչ եւ Թումայի յիշատակարանի հռետոր Գրիգորների նոյնութիւնը:

Բայց աւելի վաղ, 1471 թուին ունինք մի «տէր Գրիգոր»ի յիշատակութիւն Աղթամարի միաբանների շարքում, որ կարծում ենք, թէ այս Գրիգոր հռետորը պէտք է լինի[6]. Գրիգոր Աղթամարցին այդ ժամանակ կարող էր փոքրիկ երեխայ լինել կամ նոյն իսկ չծնուած դեռ եւս:

2. Այնուհետեւ 1525 թուականին մի յիշատակարան ունինք մեր բանաստեղծի ձեռքով գրուած. ձեռագիրը շատ աւելի հին է, 1458ին Յակոբ գրչի կողմից Աղթամարում, Զաքարիայի կաթողիկոսութեան ժամանակ գրուած, որ Աստոմ անունով մէկը նուիրում է Բերդակայ Ս. Յովհաննէս եկեղեցուն: Յետոյ՝ ՋԽ = 1491 թուին այլազգիներից՝

[6] Ձեռ. էջմ., Թ. 1062:

«ի Սոֆու Թալանէն» ազատում են այս աւետարանը Դաւիթ եւ Կիրակոս երէցները եւ վերջինիս կենակից Բէգին եւ ուղարկում իւր նախկին տեղը: Բայց 1525 թուին արդէն ուրիշներն են տացողները, որ ընծայում են «Ջուղայ» Ս. Աստուածածնին. այս յիշատակարանի հեղինակն ու գրիչն է մեր տաղասացը, որ ամբողջութեամբ մէջ ենք բերում լուսանկարչական նմանութեամբ[7] (պատկ. 1—2):

Այստեղից տեսնում ենք, որ մեր բանաստեղծը եւ լաւ գրիչ է եղել, որի ձեռքով



Պատկ. 1. Ձեռ. էջմ. 969, 308ա:

գրուած ձեռագիրներ, տարաբախտաբար, մեզ չեն հասել:

3. «Արարատ»ում մեր յօդուածի մէջ ցոյց ենք տուել, որ նա նկարազարդել է կիսով չափ Երուսաղէմի Հայոց վանքի Թ. 473 Աղեքսանդրի վարքի ձեռագիրը՝ Մարգարէ Արճիշեցու գրչութեամբ. Էջմիածնում եւս ունինք մի Մաշտոց[8], որ նկարազարդուած է նորա ձեռքով. գրիչն է Յովհաննէս քահանայ Արճիշեցի, որդի Կարապետի, թոռն Մեծոփեցու աշակերտ Յովհաննէս Մանդասարենց նշանաւոր գրչի[9], ինքն էլ աշակերտ Յովհաննէս Բաղիշեցու եւ Մարգարէ Արճիշեցու, որ նոյն է Երուսաղէմի վերոյիշեալ ձեռագրի գրչի հետ:

[7] Ձեռ. էջմ., Թ. 965/959, 308ա: Երկրորդ սիւնակի ութերորդ տողի վերջին բառի միջին մասը փճացած է, պէտք է կարդալ «զվ(եր)գին». բնագրի եւ նմանահանութեան մեծութիւնը նոյն է:

[8] Թ- 969/962:

Յովհաննէս Արճիշեցին իւր Մաշտոցը գրել է ՋՀԹ = 1530 թուին Արճէշ քաղաքում «ի դրունս սուրբ Գէորգեայ զօրավարին, ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, եւ ի թագաւորութեանն Դահման փաթշահին, որ յայսմ ամի գնացեալ է ի Խորասան ի վերայ Քաչապաշին եւ ի պար(ո)նութեանս մերոյ Զուզա (թէ՞ Զաղա) սոլթանին, որ նա այլ գնաց ի պատերազմ եւ մեացինք անպարոն, զոր լուեալ Ղազի ղըռան, թէ անտէր է վերին աշխարհն եւ եկեալ ի Հոռոմոց տանէն, եւ մեք լուեալ փախստական եղաք, եւ յաշխարհէ յաշխարհ շրջեցաք, ի յԱրծըկոյ մինչեւ ի Թավրէզ մեծ վրդովումն եղեւ Բ. ամիս. եւ Ղազի Ղըռան եկեալ ի յՕստան ի ներս առաջնորդութեամբն Շարաֆ պարոնին եւ գնացին յՈրմի. Շարաֆ բէկն ի յետ դարձաւ եւ Ղազի Ղըռան կացեալ քանի մ'օր եւ խաղաղութիւնն արար խաբէութեամբ եւ յանկարծ դիմեալ ի վերայ Որմու Օշնու եւ ղազայ արար եւ գրաւումս գերեցուց եւ մեք լուեալ ահաբեկ եղաք...»[10]:

[9] Տես մեր Թովմա Մեծոփեցու կեանքը. Վաղարշապատ 1914, եր. ԺԶ: Լալայեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, 1915, եր. 619:

[10] Շարաֆ պարոնը Բաղէշի ամիրան էր եւ յիշուած է 1517 թուին (Թ. 626 Ն. ց.) օսմանցիք 400 հոգի Ռոստոնից գերելով, կամենում են Բաղէշ անցկացնել, բայց նա արգելք է լինում. դրանցից 300 հոգի ազատում են եւ կանանց ու երեխաների հետ իրենց տներն ուղարկում:

Գրչի բուն յիշատակարանի մէջ չկայ որ եւ է տեղեկութիւն Գրիգորիս Աղթամարցու մասին, բայց յիշատակարանի տակ, ոչ անմիջապէս իբրեւ շարունակութիւն, կայ հետեւեալ պարբերութիւնը, թւում է քիչ տարբեր յիշատակարանի գրչութիւնից.



Պատկ. 2. Ձեռ. էջմ. 969, 308բ:

«Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս եւ յաղօթս ձեր զհոգեւոր հայրն մեր զտէր Գրիգորիս կաթուղիկոսն զԱղթամարցին, որ զգիրքս ծաղկեր է. Քրիստոս զիւր մեղքն թողու եւ զյիշողացն ամէն»:

Այս վկայութեամբ պարզ է, որ ձեռագրի նկարազարդողը մեր բանաստեղծն է, բայց այդ գործը գրչութեա՞ն հետ մասին կատարուած է, թէ քիչ յետոյ, դժուար է ասել. յամենայն դէպս ժամանակի տարբերութիւն մեծ չպէտք է լինի, որովհետեւ նոյն թուականին գրչի նոյն յիշատակարանի համաձայն՝ տացողները Սուլթան խոջէն եւ կողակիցը Եղիսաբեթ գիրքը նուիրել են Քաջբերունեաց Գրնդոք գիւղի սուրբ Սարգիս եւ սուրբ Անանիա եկեղեցուն:

Յիշատակարանի մէջ ուշադրութեան արժանի է մի հանգամանք եւս. ձեռագիրը թուագրուած է «ի հայրապետութեան տեառն Զաքարիայի», որ Էջմիածնի կաթուղիկոս լինել կարող չէ, որովհետեւ 1530 թուին Սարգիս Գ.ն էր Էջմիածնի կաթուղիկոսը, Զաքարիա Գ.ի յաջորդը, որ վախճանուած էր արդէն տաս տարի առաջ. Նորա կաթուղիկոսութիւնը պէտք է նշանակել

© National Library of Armenia

1515—1520 թուերին[11]: Դժուար է կարծել, որ այստեղ որեւէ արքեպիսկոպոսի համար գործածուած լինի «հայրապետութիւն» բառը, որովհետեւ գրիչը յիշել է առանձնապէս Մեծոփայ վանքի աթոռակալների անունները. «Եւ են աթոռակալք եւ առաջնորդի սուրբ ուխտիս Մեծոփայ սուրբ Աստուածածնի տաճարին եւ սուրբ վարդապետաց գերեզմանացն տէր Վարդան արհեպիսկոպոսն եւ տէր Աստուածատուրն[12] եւ Խաչատուր հերպետն», որոնց համար բարեմաղթութիւններ է անում. Նա յիշել է նաեւ մերձակայ Խառաբաստայ վանքի Մարգարայ վարդապետին, Ստեփանոս եպիսկոպոսին, որոնք օրինակն են շնորհել. Ուստի է կարծել, որ Զաքարիա հայրապետը Աղթամարի կաթողիկոս է, թէեւ այդ ժամանակ կաթողիկոս էր նաեւ Գրիգորիս:

Աղթամարի աթոռի վերայ միաժամանակ երկու կաթողիկոսի ներկայութիւնը մեզ անյարիր չպէտք է երեւայ, որովհետեւ, ինչպէս էջմիածնի, այնպէս եւ Աղթամարի համար այդ սովորական էր ԺԵ.—ԺԶ. դարերում. Ջհան չահի ժամանակակից եւ հովանաւորեալ Զաքարիայի յաջորդն էր Ստեփանոս, որ հայրապետական աթոռն է բարձրանում 1465 թուին եւ մեռնում է 1489 թուին[13], մինչդեռ 1477 թուին, ինչպէս եւ 1492 եւ 1493 թ. յիշւում է Զաքարիա կաթողիկոս, որ մեռնում է 1494ին[14]: Սորա կենդանութեան ժամանակ՝ 1491 թուին՝ նորընծայ էր Ատոմ, որ շարունակում էր իր կաթողիկոսութիւնը 1509

[11] Սարգսի յիշատակութիւնն ունինք ձեռագիրների մէջ 1525ից. Հմմտ. Էջմ. Թ. 95 Ն. Յ.:
Էջմիածնի կաթողիկոսներու յաջորդութիւնը դեռ չէ ստուգուած այս շրջանի համար.
Կը յիշուի Սարգիս 1524/25ին:
Զաքարիա 1530ին:
Գրիգոր 1530ին, 1533ին:
Հ. Ն. Ա.

[12] Կարծում ենք Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսի ժամանակակից, Պոլսոյ Պատրիարք Աստուածատուր Մեծոփեցին է, որի համար Զաքարիան 1544 թուին գրեց եւ նկարազարդեց Աղեքսանդրի վարքի մի օրինակ (տ. մեր Խաղրակեանք կամ Պոռչեանք, Ա, 1928, եր. 241. 247). Նոյն Աստուածատուրն պիտի լինի եւ 1564 թուին որպէս Մեծոփայ առաջնորդ յիշուած Աստուածատուր եպիսկոպոսը Մկրտիչ երեցի կողմից գրուած Մաշտոցի մէջ (Էջմ. Ձեռ., Թ. 1024). «Եւ եղեւ գրութիւն սորա ի յերկիրս Բաղրեւանի... ի յառաջնորդութեանն սուրբ ուխտի Մեծոփայ տէր Աստուածատուր եպիսկոպոսին եւ տէր Թադէոսին»:
Բայց առանց տարակուսի նոյն է սա այն «Մեծոփեցի Աստուածատուրին» հետ, որուն խնդրանօք գրեց Գրիգորիս Աղթամարցի իր «Ծաղկունքն ամեն» տաղը: Հ. Ն. Ա.

[13] Փիրղալէմեան, Նոտարք Հայոց, 222: Ձեռ. Էջմ-ի, Թ. 1062:

[14] Արցախ Բարխուդարեանի, եր. 112: Ձեռ. Էջմ-ի Թ. 4201 եւ 209 Ն. Յ.: Լալ., Ցուց., եր. 519 եւ Սրուանձտեան, Թորոս Աղբար, Բ, 1884, Կ. Պոլիս, եր. 447:

թուին եւս[15], իսկ 1503 թուին յիշուած է մի ուրիշ Զաքարիա կաթողիկոս[16]:

4. Ե՞րբ է Գրիգորիսը բարձրացել կաթողիկոսական աթոռը. Հաստատ պատասխանել չենք կարող մեր ձեռքի տակ եղած աղբիւրներով, բայց նա հաւանօրէն Ատոմի յաջորդն էր, որովհետեւ ուրիշ կաթողիկոս չի յիշւում, աւելի ճիշդ աղբիւրներ յայտնի չեն մեզ, որոնք ցոյց տային, թէ Ատոմի եւ Գրիգորիսի կաթողիկոսութեան մէջ մի ուրիշ անձն է եղել Աղթամարի աթոռի վրայ, բացի 1530 թուին յիշուած Զաքարիան:

Ատոմի առաջին յիշատակութիւնն ունինք Ներսէս եպիսկոպոս գրչի կողմից, որդի Կուզջի բէկին եւ Խնա Խաթունին, եղբայր Ստեփանոս կաթողիկոսի, Աղթամարի բազմաշխատ եւ նշանաւոր գրիչներից մէկը, Մինասենց Թումայի աշակերտը, որ իր յիշատակարանների մէջ կարեւոր տեղեկութիւններ է տալիս իր տոհմի եւ Աղթամարի պատմութեան մասին. Նա 1471 թուին գրած Մաշտոցի մէջ[17] յիշում է եւ «զհամշիրակ եղբայրն մեր զտէր Ատոմ արհեպիսկոպոսն եւ զկիր եղբայրքն զԱռաքել եւ զԽաչատուր, որ շատ աշխատեցան սուրբ աթոռոյս», որ նոյնացնում ենք նոյնանուն կաթողիկոսի հետ:

Ատոմը կաթողիկոսական աթոռը բարձրացաւ հաւանօրէն 1490 թուին, Ստեփանոսի մահուանից յետոյ, որ պատահեցաւ 1489 թուին. «ի Ջ. եւ ԼԸ. թըւին տէր Ստեփանոս կաթողիկոսն վաղճանեցաւ», գրում է Աղթամարի Յովհաննէս արեղան, որ աւարտում է Թ. 1062 Մաշտոցը, կաթողիկոսի եղբայր Ներսէս եպիսկոպոսի կողմից գրուած Ոստանում մի տաճկի մօտ, իր հանգուցեալ եղբօր պարտքը հատուցանելու համար: Բայց Ներսէսն էլ մեռնում է 1491 թուին, եւ վերոյիշեալ Յովհաննէս արեղան կարողանում է գնել եւ նուիրել Աղթամարի վանքին[18]: Մենք կարող ենք նոյն իսկ ամսաթուով ճշդել Ստեփանոսի մահը. Նորա եղբայրը, վերոյիշեալ Ներսէսը, գրել է մի Յայսմաւուրք լաւ եւ վարժ բոլորգրով, բայց տարաբախտաբար սկզբից եւ վերջից պակաս, ուրեմն եւ առանց վերջին յիշատակարանի, ուր գրիչները աւելի մանրամասնութիւններ են յայտնում ձեռագրի ծագման, տեղի եւ այլ հանգամանքների մասին, որ կը լինէր այս դէպքում ձեռագրի շարունակողների կողմից, որովհետեւ Ներսէս չի վերջացրել ամբողջը, մահուան կամ մի այլ պատճառով: Բայց նա ունի բազմաթիւ մանր յիշատակարաններ սրբոց վկայաբանութիւն-

[15] Կոտայքի Գետմբիս գիւղի եկեղեցու աւետարանի յիշատակարան, մեր ժողովածուից: Ձեռ. Էջմ. 418 եւ Լալ., Ցուց., եր. 637 եւ 640:
[16] Լալ., Ցուց., եր. 619:
[17] Ձեռ. Էջմ. Թ. 1062. բուն գրչի յիշատակարան:
[18] Անդ, երկրորդ յիշատակարան:

ների վերջում. դրանցից մէկը «արէ ԺԶ. եւ Նոյեմբերի ԻԴ.» Գրիգոր սքանչելագործի վկայաբանութեան վերջում, վերաբերում է Ստեփանոսի մահուան. «Աստուածածնի փոխման տանի. Ը. օրեայ կատարման կիրակի՝ առաւօտուն վերայփոխեցաւ յաշխարհէս: Տէրն Ստեփաննոս կաթողիկոսն ամենայն հայոց. եւ եղեւ սուգ եւ տրտմութիւն հայոց ազգիս. եւ արեգակն եւ լուսին խաւարեցաւ. եւ վայ Ռ. բերան եղբօրս, եղուկ որ վայ Ներսէսիս, որ դառն եղանէ իմ հոգիս, խաւարեցաւ աչս յերեսիս եւ եղուկ իմ անձին[19]»:

Այսպիսով այս երկու յիշատակարանները լրացնելով իրար, ճշդում են Ստեփանոսի մահուան տարին եւ ամսաթիւը: Ատոմի կաթողիկոսութեան առաջին տարին, ուրեմն, պէտք է համարել 1490, թէեւ առաջին յիշատակութիւնն ունինք միայն 1491 թուից իբրեւ նորընծայ կաթողիկոսի*:

[19] Ձեռ. Էջմ. Թ. 609:
* Ստեփանոս վախճանած է այս յիշատակարանի համաձայն 1489, Օգ. 23, Կիր.: Իր յաջորդն եղած է Զաքարիա սա 1489ին կը յիշատակուի արդէն «նորընծայ Կաթողիկոս» եւ երկրորդ անգամ 1490ին (տես իմ Գաւազանագիրք, էջ 120): Որովհետեւ ինծի ծանօթ չէ 1490—1496 Աղթամարի աթոռին վրայ ուրիշ անուն, եւ Ատոմ առաջին անգամ 1496ին կը յիշատակուի, նշանակած եմ Զաքարիայի կաթողիկոսութեան տեւողութիւնը 1489—1496: Հետաքրքրական է որ Էջմ. Թ. 1684 դեռ 1499ին «նորընծայ» գիտէ զԱտոմ: Դժբախտաբար յօդուածագիրը չէ յիշատակած թէ ինչ աղբիւրէ գիտէ Ատոմի 1491ին «նորընծայ» կոչումը: Ատոմ իրեն յաջորդ ունեցաւ 1510ին (՞) զՅովհաննէս (տե՛ս Գաւազանագիրք, էջ 124): Հ. Ն. Ա.

Այնուհետեւ նա յիշւում է 1497[20], 1498[21], 1499[22], 1501[23], 1503[24], 1508[25] եւ 1509[26] թուականներին. ապրե՞լ է նա յետոյ էլ եւ ե՞րբ է վախճանուել, ասել չենք կարող մեր ձեռքի տակ եղած աղբիւրներով:

5. Գրիգորիսի կաթողիկոսութեան սկզբնաւորութիւնը չենք կարող որոշել եւ իր գրուածքներով. Նա իր գրուածքների մէջ իրեն կաթողիկոս չէ անուանում. վերնագրերի «Գրիգորիս կաթողիկոս», «Գրիգոր կաթողիկոս» յորջորջումը յետագայ գրիչների գործն է եւ ոչ հեղինակի: Իր տաղերի մէջ ինքն իրեն անուանում է «Աղթամարցի» (Կոստանեան, էջ 59, 64, 69), «Գրիգոր» կամ «Գրիգորիս Աղթամարցի» (Կոստ., 53, 77, 91), «Գրիգոր» (Կոստ., 46, 84) եւ միայն 1516 թուի Մարինոսի ստանաւոր վկայաբանութեան մէջ «տեսուչ».

Ես Գրիգորիս նուաստըս Աղթամարցի
Ապիկարըս տեսուչ եւ անյիշելի:

Այստեղից ի հարկէ, դժուար է հաստատապէս եզրակացնել, որ «տեսուչ» բառով

[20] Ձեռ. Էջմ. Թ. 261/158, Թ. 3534:
[21] Լալ., Ցուց., եր. 526:
[22] Ձեռ. Էջմ. Թ. 1684, ուր զարմանալի կերպով դարձեալ «նորընծայ» է կոչուած Ատոմը. արդեօք նոյնանուն ուրի՞շ անձ է:
[23] Ձեռ. Էջմ. Թ. 1189 Ն. Յ.:
[24] Լալ., Ցուց., եր. 619:
[25] Ձեռ. Էջմ. Թ. 751. Լալ., եր. 634:
[26] Ձեռ. Էջմ. Թ. 418: Լալ., Ցուց. 637, 640:

Պատկ. 3. Ձեռ. Էջմ. 3534, 13բ–14ա:

© National Library of Armenia

կաթողիկոս պէտք է հասկանալ, միայն այն հանգամանքը, որ այս ժամանակները որ եւ է այլ կաթողիկոսի յիշատակութիւն չկայ, կարող է ենթադրութեան առիթ տալ, որ Գրիգորիսն էր ժամանակի կաթողիկոսը:

Առաջին անգամ Գրիգորիսի կաթողիկոսական յիշատակութեան համար տեղեկութիւն ունինք 1526 թուին Խիզանում գրուած մի Մաշտոցի յիշատակարանից, ուր «ՌՀԵ·» թուականը իբրեւ տպագրութեան սխալ պէտք է ուղղել «ՋՀԵ», ինչպէս ցոյց ենք տուել «Արարատ»ի մեր յօդուածի մէջ[27]: Երկրորդ յիշատակութիւնը 1530 թուին տեսանք վերեւ: Ապա 1533 թուին յիշում է նորան Յովսէփ Աղթամարցին Լիմ անապատում իւր գրած Մաշտոցի մէջ. «ի հայրապետու-

սաւէր խաբեբայ եւ ոչ աբեղայ», կամ «եղկելի գծող Յուսէփ Աղթամարցի»: Նրա գրական գործունէութիւնը փոքր է եւ անարժէք, կամ փոքր չափով է հասել մեր ձեռքը. Կոստանեանց ունի մի փոքրիկ հատուած խրատական բնաւորութեամբ, Պղնձէ քաղաքի կաֆաներից էլ մի տուն նորան է վերագրուած[29]. Նման ոճով այս ձեռագրի մէջ իբրեւ գրիչ հետեւեալ խրատն ունի տաղանաւոր.

Ո՛վ սիրելի եղբայր որ ես, տամ քեզ խրատ
    որ լսես,
Զըլնի թէ զմատըդ թըքոտես եւ ապա՛[30]
    զթուխտըն չրջես,

Պատկ. 4. Ձեռ. Էջմ. 969, 4ա:

թեան տեառն Գրիգորիսի, ի թագաւորութեանն Դահման կարմրագդակի[28]»:

Որովհետեւ Յովսէփ Աղթամարցու կեանքը կապուած է Գրիգորիսի հետ, կ'աւելացնենք այստեղ, ինչ որ յաջողուել է մեզ ձեռք բերել նորա մասին «Արարատ»ի յօդուածի տպագրութիւնից յետոյ: Այս Մաշտոցը նա գրել է եւ նկարազարդել միայնակեաց Զանազիգ Յովհաննէսի համար, որ իւր ամուսնու մահուանից յետոյ «սիրեաց կլութիւն եւ զառաքինութիւն, հրաժեշտ ի վանորայս, խոնջաքիրտն աշխատանաւք, ուստի ստացաւ զՄաշտոցս եւ աւետարան մի». Նա իրեն անուանում է «Յուսէփ մեղ-

Ո՛վ որ ըղմատն թըքոտէ եւ ըզգըրոց թուխտըն հըջէ,
    Նա յԱստուծոյ ամաւթ կըրէ, եւ ի բարեացն անմասն եւյէ:
Ով որ չորով գգիրքըն բըռնէ, պատրաստութեամբ զթուխտըն հըրջէ,
    Աստուած զիւր մեղքըն ջնջէ, եւ զեկայք ալրհնեալքըն լսէ.
Ով որ գգիրքըն վըրդոհ? պարզէ, նա յանաստն կու նմանէ,
    Զչարուածքըն զամէն կու քակտէ, եւ կապին փոսս կու զործէ[31]:

Ինչպէս Գրիգորիս Աղթամարցին բանաստեղծ էր եւ նկարիչ, նոյնպէս եւ Յով-

[27] Սրուանձտեան, Թորոս Աղբար. Բ, 1884. Կ. Պոլիս, եր. 254: «Արարատ» 1919, Յունուար—Դեկտեմբեր, միացեալ համար, եր. 4—5:
[28] Ձեռ. էջմ. Թ. 945, 211 բ:

[29] Նոր ժողովածու, Դ. պրակ, 1903, եր. 42:
[30] «Արարատ» 1919, եր. 16:
[31] Ձեռ. էջմ. Թ. 945:

սէփ Աղթամարցին, միայն աւելի պակաս շնորհքով. Նա նկարազարդել է ոչ միայն այս ձեռագիրը, այլեւ ուրիշները. այս Մաշտոցի մէջ ունինք հիմնարկէքի (6բ), ձեռնադրութեան (197 բ) եւ թաղման (211 ա) պատկերները: Նա է նկարազարդել նաեւ Թ. 261/158 եւ 3534 աւետարանները, երկուսն էլ 1497 թուին եւ Ստոմի կաթողիկոսութեան յիշատակութեամբ: Առաջնի գրիչն է Մարտիրոս աբեղայ, որ գրել է «ի թուաբերութեան հայկազան տումարիս. ՋԽԶ. ամին, յանառիկ եւ ի տիրախնամ կղզիս Աղթամար», բայց նկարիչն է Յովսէփ Աղթամարցին, որի համար գրիչը հետեւեալ յիշատակութիւնն ունի.

«Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՅով-

կապուած է Աղթամարցու հետ[33]. Նա լրացրել է Ներսէս եպիսկոպոսի՝ Ստեփաննոս կաթողիկոսի եղբօր՝ վերեւ յիշած Թ. 609 Յայսմաւուրքը իւր «Յովհաննէս աշակերտ»ի հետ. որ Յովհաննէս քահանայ Արճիշեցին է, Թ. 969/962 Մաշտոցի գրիչը, տեղ տեղ նշանակելով իւր անունը. «Մարգարէ եղկելի գրիչ», «Մարգարէ մեղաւոր գծող Արճիշեցի»: Բայց այս կատարուել է շատ տարիներ յետոյ. Նախ փոխուած են ստացողները, որ նախկին ստացողի եղբօրորդիքն են եւ ապա գիտենք, որ Մարգարէ Արճիշեցին իւր արուեստն սկսել է գործադրել 1522 թուից սկսած կամ 1536 թուից 14 տարի առաջ:

7. Գրիգորիսի յիշատակութիւնն ունինք

Պատկ. 5. Ձեռ. Էջմ. 969, 80բ:

սէփ կրօնաւորն, որ յոյժ աշխատութեամբ նկարեց զսուրբ աւետարանս»:

Երկու ձեռագրի նկարչութիւնը կատարելապէս նման են միմեանց եւ բովանդակութիւնները նշանակուած նկարչի ձեռքով. Իսկ Թ. 3534, 13բ հոգեգալստեան պատկերի տակ մակագրուած է նաեւ. «ԶՅովսէփ նկարող սուրբ աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք»: Տալիս ենք այդ նկարը նորա արուեստի մասին գաղափար կազմելու համար (պատկ. 3)[32]:

6. Այնուհետեւ իբրեւ «կաթողիկոս», «հոգեւոր տէր» եւն յաճախ յիշատակուած է Գրիգորիսը 1536 թուին Մարգարէ Արճիշեցու կողմից. այս գրիչն եւս իւր կեանքով

Ստեփաննոս երեցի կողմից 1542 թուին. Նա իւր գրած Մաշտոցը Վանում թուագրում է «ի թուականիս հայոց ՋՂԱ (=1542) եւ հայրապետութեան տեառն Գրիգոր կաթողիկոսի եւ մերոյ աթոռակալի սուրբ ուխտիս Վարագայ Ստեփաննոս վարդապետի եւ ի փախչահութեան շահ Դահմազի կարմիր գդակի եւ ի տեղապահութեան Շամիրամպկերտիս Շահալի սօլթանին... [34]»: Գրիգոր անունով կաթողիկոս չունինք էջմիածնում 1542 թուին, ուրեմն եւ սա Աղթամարցին է:

8. Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսի յիշատակութիւնը 1544 թուին Յովսէփ Աղթամարցու մահուան յիշատակութեան հետ եւ Գրիգորիսի անունը, որպէս իւր ուսուցիչ-

[32] Տես եւ «Արարատ» 1919, եր. 5:

[33] Անդ, 13—15:
[34] Ձեռ. էջմ. 1294 նգ.:

© National Library of Armenia

ների, յայտնի է արդէն բանասիրութեան: Նա յիշատակել է եւ շատ աւելի յետոյ, երբ վաղուց մեռած էին նրանք[35]:

Գրիգորիսի մահուան մասին անմիջական տեղեկութիւն չունինք, բայց 1546 թուին արդէն մեռած էր եւ յաջորդած Գրիգորիս Փոքրը. ոմն Ստեփանոս գրիչ իւր Յայսմաւուրքի յիշատակարանի մէջ ունի հետեւեալ տողերը. «հասուցի զսա յաւարտումն ի տեղիս, որ կոչի Ծպատ, ընդ հովանեաւ հոյակապ եւ հռչակաւոր սուրբ ուխտիս Ամենափրկչիս եւ սուրբ Կարապետիս եւ լուսոյ մօր Աստուածածնիս, ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի փոքուն եւ ի թուականիս հայոց. ՋՂԵ. ի դառն եւ ի վշտալից ժամանակիս, յորում կամք ընդ հարկի եւ ի ծառայութեան ազգին նետողաց . . .»[36]: Հետեւեալ տարին եւս յիշատակուած Գրիգորիսը՝ Փոքրն է, մի Մաշտոցի յիշատակարանի համաձայն, որ գրուած է յաստուածաբնակ ուխտս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս Սըբոնայ վանաց, ի հայրապետութիւն տեառն փոքր Գրիգորիսին, որ ի կղզիս Աղթամարայ, ի թուականիս հայոց: ՋՂԶ (= 1547)[37]»:

Այս Գրիգորիս Փոքրը համարւում է ապրած մինչեւ 1612 թիւը. բայց սխալ է, նա պէտք է մեռած լինի 1572/73 թուին, որովհետեւ 1573 թուին յիշւում է մի «նորընծայ կաթուղիկոս» Գրիգորիս անունով, որ չէր կարող այդպէս կոչուել 1546 թուականից ի վեր կաթուղիկոսական աթոռի վրայ նստած մի անձն: Այդ նորընծայ Գրիգորիսը չենք կարող նոյնացնել նաեւ Էջմիածնի Գրիգոր

Պատկ. 6. Ձեռ. Էջմ. 969, Թղ. 250բ:

[35] Տաշեան, Ուսումն. Ստոյն Կալիսթենեայ, եր. 157: Ակինեան, Զաքարիա եպիսկոպոս Գնունեաց, եր. 7: Մեր «Խաղաղականք կամ Պռոշեանք», եր. 224:

[36] Ձեռ. Էջմ. Թ. 51:

[37] Ձեռ. Էջմ. Թ. 1028/1034:

ԺԲ.ի հետ, որ եթէ կենդանի էլ լինէր, յամենայն դէպս «նորընծայ» չէր. բայց մենք գիտենք, որ 1572 թուին Էջմիածնի կաթուղիկոսը Ստեփանոս Զ.ն էր, «Զղլախ» կոչուածը[38]: Ապա ուրեմն Տաղասացի յաջորդ Գրիգորիս ապրել է մինչեւ 1572, նորան յաջորդել է մի ուրիշ Գրիգորիս, որ դարձեալ «փոքր» է կոչուել իւր նախորդի համեմատութեամբ:

9. Մեզ կը մնայ մի քանի խօսք ասել Աղթամարցու մանրանկարչութեան մասին. Աղթամարը, ուր ծաղկել է գրչութեան արուեստը ԺԳ. դարից մինչեւ Գրիգորիսի ժամանակները եւ յետոյ, առանձնապէս նշանաւոր չէ հանդիսացել մանրանկարչութեան մէջ, ինչպէս, օրինակ, Գլաձորի դպրոցն էր արեւելեան Հայաստանում. այդ կողմից շատ աւելի նշանաւոր է Խիզանի դպրոցը, որ հոգեւոր կապեր ունենալով Աղթամարի հետ, սկսում է գերազանցել մանրանկարչութեան մէջ իւր մի շարք, իրար ժամանակակից կամ իրար յաջորդող, վարդապետների գործերով, առանձնայատուկ ոճ ստեղծելով, երբեմն էլ տեղական-կենցաղական գունաւորութեամբ: Բուն Աղթամարում համեմատաբար քիչ են մանրանկարիչները, եղածներն էլ աւելի կենդանական եւ զարդագրութեան արուեստի մէջ ուշադրութեան արժանի, քան պատկերագրութեան: ԺԶ. դարն արդէն հայ արուեստի եւ մանրանկարչութեան անկման շրջան էր, երբ գործում էր իբրեւ մանրանկարիչ եւ մեր Գրիգորիսը. բայց նա իւր ժամանակի լաւագոյն ներկայացուցիչներից մէկն է, ոչ զուրկ արտայայտութեան, կեցուածքի, շարժման բնական պատկերաւորման կարողութիւնից. համեմատեցէք Գրիգորիսի արուեստը Յովսէփ Աղթամարցու

[38] Լալ., Ցուց. 679, 676:

հետ եւ իսկոյն յայտնի կը լինի սորա խեղճութիւնը միւսի առաւելութեան հանդէպ: Աղթամարցու մանրանկարչութիւնն էլ մեզ հետաքրքրում է ոչ այնչափ իւր զուտ գեղարուեստական յատկութիւններով կամ իբրեւ հայ արուեստի պատմութեան համար առանձին նորութիւն բերող երեւոյթ, այլ որպէս մեր միջնադարեան նշանաւոր բանաստեղծներից մէկի գործ: Յայտնի է, որ արուեստաւորներից շատերը իրենց բուն արուեստի հետ մեծ կամ փոքր չափով ունակութիւն են ցոյց տուել եւ միւս ճիւղերի մէջ. Միքել Անջելոն ոչ միայն առաջնակարգ արձանագործ էր, եւ նշանաւոր նկարիչ, այլ եւ բանաստեղծ, ճարտարապետ. բայց նա արտաքոյ կարգի հանճար էր. ուրիշ արուեստաւորներ իրենց երկրորդական ճիւղերում աւելի երկրորդական էլ արդիւնք են ցուցադրել: Այսպէս եւ մեր Աղթամարցին բանաստեղծ էր, բայց երկրորդաբար եւ նկարիչ, գուցէ եւ գրիչ, նորա թողած յիշատակարանից դատելով. եւ նա միակը չէ մեր միջնադարեան բանաստեղծների մէջ այդ կողմից. Խաչատուր Կեչառեցին, Մկրտիչ Նաղաշ, Յովասափ Սեբաստացի եւ Զաքարիա Գնունեաց եպիսկոպոս աւելի կամ պակաս չափով արդիւնաւորել են իրենց տաղանդը նաեւ նկարչութեան կամ գրչութեան մէջ:

Տարաբախտաբար Գրիգորիս Աղթամարցու մանրանկարչութեան մասին լիակատար ծանօթութիւն եւ գնահատութիւն տալ կարող չենք. նորա համեմատաբար աւելի մեծ գործը, Աղեքսանդրի վարքի նկարները, ձեռքի տակ չունինք, իսկ 18 տարի առաջ ստացած տպաւորութեամբ, երբ տեսել ենք այդ ձեռագիրը Երուսաղէմում (Թ. 473) առանց լուսանկարելու, դատել չենք կարող, թէեւ ինչպէս էլ լինի, հետաքրքրական է այն իբրեւ իւր տեսակի հնագոյն եւ աշխարհիկ բովանդակութեամբ ձեռագիրներից մէկը:

Էջմիածնում մեզ յաջողուել է միայն մի Մաշտոց գտնել նորա նկարած, չորս պատկերներով, ապա համապատասխան սկուածքի եւ լուսանցքի զարդերով, Թ. 969/962: Մաշտոցների մանրանկարչութեան մէջ Աղթամարը իրօք որոշ տեղ է բռնում մեր արուեստի մէջ. ոչ այնչափ իւր բարձր որակով, որչափ իւր քանակով եւ երբեմն բովանդակութեան ճոխութեամբ, որպիսին Ջհանշահի ժամանակակից Զաքարիա կաթուղիկոսի Մաշտոցն է, նաեւ թագաւորական օծման հետ կապուած նկարներով եւ նշանակներով, ինչպէս օրհնութեան ընդհանուր տեսարանն է, արքայական սուրը իւր կապելիքներով, մատանին, գաւազանը, թագը, աթոռը, ամէն մէկը նկարուած համապատասխան աղօթքի եւ արարողութեան հետ[39]:

[39] Ձեռ. Էջմ. Թ. 1040 նշ.: Գրիչն է Ստեփանոս, որ գրել է 1461 թուին Էջմիածնում, բայց հաւանօրէն

Գրիգորիսի նկարազարդած Մաշտոցն աւելի պարզ է, թէպէտ եւ սորա սակաւաթիւ պատկերներն էլ եկեղեցական արարողութեան հետ կապուած, ուրեմն եւ ազգագրական դրոշմով, բացի մկրտութեան տեսարանից, որ շաբլոնական է: Մանրանկարներից առաջինը հիմնարկէքն է, 4ա. Հինգ վեղարաւորներ կանգնած են իրար յետեւից աջ կողմից (բեմի). առաջինը հայրապետն է կամ եպիսկոպոսը՝ նոյնպէս վեղարով, ձեռքին խաչ, աջն առաջ մեկնած, շուրջառի վրայից խաչազարդ եմիփորոնով, համաձայն հայկական հին աւանդութեան: Ձախից աթոռի վրայ նստած է թագազարդ մի Փիգուր, ներքնազգեստի վրայից ականազարդ գօտի կապած, եւ ապա վրայից ծիրանին, կոճկած առաջի կողմից. աջ ձեռքը դրել է կրծքին, ոտքերին կարմիր կօշիկ, իսկ աթոռի եւ ոտքերի տակ գորգ փռած, նրա յետեւից կանգնած է մի երիտասարդ պալատական, միայն օձիքը զարդարած, բիւզանդական ձեւի տունիկայով: Թագազարդ անձով եկեղեցու հիմնարկողն է պատկերաւորած, որ միջին դարերում ըստ մեծի մասին իշխանական դասից էին: Եպիսկոպոսի առաջ վարպետը (ճարտարապետը) կարճ բաճկոնով, անդրավարտիքի ծայրերը անցկացրած երկարավիզ կօշկի կամ գուլպաների մէջ, կզուած, շարում է հիմնարկութեան համար օրհնելիք քարերը, բնական ձեւակերպութեամբ եւ թեքմամբ: Խմբանկարի մէջ եւս կայ արարողութեան համապատասխան կենդրոնացում եւ ամբողջութեան միութիւն. ամենքի ուշադրութիւնն ուղղուած է դէպի եպիսկոպոսը, որ սրբազան արարողութեան կենտրոնական անձն է:

Երկրորդ պատկերը ձեռնադրութիւնն է 80բ (պատկ. 5). երկու ուրարակիր ծունկ են չոքել աթոռի վրայ նստած եպիսկոպոսի առաջ, որ նախընթաց պատկերի համեմատ միայն վեղար ունի եւ խաչազարդ եմիփորոն Փիլոնի վերայից. եպիսկոպոսը ձախը դրել է առաջին ընծայացուի գլխին եւ աջով օրհնում է: Երեք վեղարաւոր կանգնած են ընծայացուների յետեւից աւետարան ձեռքներին կամ գուցէ հէնց Մաշտոց՝ իբրեւ օգնականներ ձեռնադրող եպիսկոպոսին: Իրար կտրող կամարներով եւ նրանց վերայի փոքրիկ գմբեթով նկարիչը կամեցել է ներքին տեսարանը մատնանշել:

Երրորդ մանրանկարը 110բ Յիսուսի մկրտութիւնն է պատկերաւորում եւ ոչ եկեղեցում կատարուող արարողութիւնը. Յիսուս մերկ, ձեռքերը կրծքին խաչած, մինչեւ պորտը ջրի մէջ, որ լեռնացած է. Յովհաննէս մերկ մարմնի վերայ քղամիդ է ձգած միայն, աջը Յիսուսի գլխին, ձախով փա-

Աղթամարից գալով Զաքարիայի հետ, երբ սա Ջհանշահի հովանաւորութեամբ գրաւեց հայրապետական երկու աթոռները եւ կարճ ժամանակով Էջմիածին եկաւ:

© National Library of Armenia

թոյթ բռնած։ Զրի միւս կողմը երկու հրեշտակ բռնել են Յիսուսի հագուստը։

Զորրորդ նկարը 250 բ քահանայաթաղն է (պատկ. 6). մահճակալի վերայ պառկեցրած է ննջեցեալը, որին սպիտակ կտաւով պատել է մի քահանայ եւ կնգուղ անցրել գլուխը. ինքն էլ թեքուած դէպի ննջեցեալը, գրկել է նրան եւ բարձրացրել նրա իրանը։ Երկու ուրիշ հոգեւորական կանգնած են նրա



Պատկ. 7. Զեռ. ԷՀՄ. 969։

յետեւից. առաջինը քիչ առաջ թեքուած, իսկ երկրորդը խաչակնքում է։ Պատկերի այս մասը բնական է եւ կենցաղի հետ կապուած. բոլորն էլ այսպէս կամ այնպէս զբաղուած են ննջեցեալով եւ բոլորին կապել է ննջեցեալին թաղելու միտքը։ Աւելի բարձր՝ Տէրն է նստած աթոռի վերայ շրջապատուած լուսով խաչակնքում է, մի մի հրեշտակ կողքերից, որոնցից մէկը ննջեցեալի մանկան կերպարանքով հոգին է գրկել։

Բացի այս մանրանկարներից կան եւ սկսուածքի զարդեր բուսական եւ երկրաչափական մոտիւներով, ինչպէս եւ լուսանցքի զարդեր, ծաղիկներ անօթի մէջ, մարդկային դէմքեր միայն կինեվարիումով ուրուագծուած։ Նկարչի գոյներն առ հասարակ վառ չեն եւ պայծառ. գործադրում է միայն կարմիր, նարինջի եւ դորշ գոյները։

Նկարազարդուած է ոչ միայն ձեռագիրը, այլ եւ կազմի մէջ առնուած կողմերը, արտաքուստ (պատկ. 7 եւ 8). կազմարարութեան արուեստի հետ կապուած մի երեւոյթ էր սա էլ, թէեւ հազուագիւտ. ընթերցողը տեսնում է մի կողմը փրկչի ան-



Պատկ. 8. Զեռ. ԷՀՄ. 969։

գրին, լուսոյ պսակով, աջով աւետարանը կրծքին սեղմած, իսկ ձախը փորին դրած. միւս կողմը մի ծաղիկ է երկու կողմից կանթաւոր անօթի մէջ։ Երկուսն էլ շնորհքով եւ գեղեցիկ, բայց արուեստից զատելով՝ ոչ Աղթամարցու գործ, այլ, հաւանօրէն, վերջին կազմող Սահրաթ գպրի «ի թուարերութիւն հայոց ՌՃԿԳ (=1714)», տէր Մարգարէի եւ իւր կնոջ ստացմամբ։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԱՐԱՑ ԳԵՂԵՑԻԿ ՅՈՑՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Աններելի յանդգնութիւն պիտի համարուէր անշուշտ ըսելը թէ Պղատոնի «Հասարակապետութիւն» գրքին Ἡρὼ[1] եւ նոյնին «Խնջոյք» անունով սքանչելի երկախօսութեան Ἔρως կամ Ἔρως ուղղագրական տարբեր ձեւերով գիցաբանական միւնոյն դէմքը մատնանիշ կ'ընեն մեզի։ Վերջինս յունական ծանօթ էրոսն է. եւ ստուգաբանօրէն յառաջ կը բերուի սովորաբար յուն. ἐράω (= սիրել) կամ ἔραος (= սէր, տուփանք) բառերէն։ Սակայն միւս կողմանէ պէտք չէ նաեւ անտեսել, որ Պղատոն «Խնջոյք»ի մէջ Ἔρως ի բոլորովին ուրիշ նկարագիր տուած է. նկարագիր մը, որ շատ կը մերձենայ «Հասարակապետութիւն» գրքին Ἡρὼին։

Յատկապէս սիրոյ վրայ Պղատոն «Փեդրոս»ի մէջ կը խօսի, մինչդեռ «Խնջոյք»ի մէջ Ἔρως կը ներկայանայ մեզի աւելի իբր միջնէակ մը մահկանացուներու եւ անմահներու միջեւ, հեղինակ եւ առհաւատչեայ անմահութեան։ Միջնորդութիւն կ'ընէ Աստուածութեան եւ մարդկան միջեւ, հաղորդելով մարդկան Աստուածութեան կամքը եւ միջնորդելով Աստուածութեան մարդկան աղօթքներն ու զոհերը։ Աստուածներու եւ մարդկան միջեւ կատարուած ամէն բան կ'ընէր Էրոսի ձեռքով։ Որդի է Պորոսի (Πόρος = բաղձանք) եւ Պենիայի (Πενία = աղքատութիւն), անոր համար հօրը կողմանէ զօրաւոր հսկայ որսորդ մին է եւ ձգտող բարւոյն եւ գեղեցիկին. իսկ մօրը կողմանէ միշտ աղքատ, կարօտ եւ զարգանալու ընդունակ[2]։ Այս պատկերը, որով Պղատոն Էրոսի էութիւնը Սոկրատէսի բնորոշել կու տայ, շատ մեծ տարբերութիւն մը չունի մեր պամֆիլացւոյն նկարագրէն, որ միջնորդ է նոյնպէս մարդկան եւ Աստուծոյ միջեւ եւ իր յարութեամբը նաեւ առհաւատչեայ անմահութեան։ Խնդրոյն ծանրակէտը բուն իսկ հոն է, որ Էրոս միայն Պղատոնի քով այսպէս կը նկարագրուի։ Զարմանալի չէ հետեւաբար, եթէ միտիմ ըսելու թէ Թերեւս Պամֆիլացւոյն առասպելէն ինչ

1 Այս մասին հմմտ. նաեւ Lagarde, Geschichtliche Abhandlungen, 168—170։

2 Platonis Opera: C. E. Ch. Schneider, Parisiis, ed DCCCXLVI, հմմտ. նաեւ Platonis sämtliche Werke. Üb. H. Müller, Leipzig. XI. Bd. 1854, S. 270-336։

ինչ գծեր անցած ըլլան Պղատոնի Էրոսին. որոշ ծրագրով մը թէ անգիտակցաբար՝ երկրորդական խնդիր է։ Հիմայ կը հասկցուի թէ ինչու Քրիստոսէ յառաջ 3ՐԴ դարէն ասդին Էրոսի եւ Պսիխէի (Psyche) միջեւ, որ հոգւոյ դիցաբանական անձնաւորումն է եւ ծագած հաւանօրէն ոչ առանց ազդեցութեան Պղատոնի փիլիսոփայական գրութեան, այնպիսի ներքին սերտ յարաբերութիւն մը ստեղծուեցաւ, որ իր ամբողջ ձգտումով սիրային է, բայց նաեւ սանդարամետական. եւ այս տեսակէտով Ադոնիսի եւ Ափրոդիտէի կամ Արայի եւ Շամիրամի հետ գրեթէ միեւնոյն գծի վրայ։

Արդ Էրոսի առասպելին այս վերջին զարգացումը միայն Պղատոնով չի մեկնուիր. կային ապահով ուրիշ ազգակներ ալ, որոնք թերեւս շատ աւելի հին էին եւ իրենց ծագումով նոյն իսկ նախապատմական քան որ սովորաբար կը կարծուի։ Յոնիական բանաստեղծներու սիրոյ աստուածը, կ'ըսէ J. Boehlau[1], հին բնաստուած (Naturgott) Էրոսին պատկերը մթագնեց։ Իսկ A. Furtwängler մինչեւ իսկ կը յայտարարէ թէ Էրոսի ճաշակազիտականն ու սիրահարականը յետագայ դարերու գործ է[2]։ Էրոս անուան յուն. ἔραος էն յառաջբերութիւնն ալ տակաւին լուծուած խնդիր մը չէ. Մ. Միւլլեր զայն աղերսի մէջ կը դնէ սանսկ. ar-vat կամ ar-vas ի հետ, որ կը նշանակէ «վազող, սուրացող, արագահաս», նոյն կարծիքն են նաեւ Mehlis եւ ուրիշներ[3]։ Ինչպէս ծանօթ է, Հեսիոդոսի համաձայն ամէն բանէ յառաջ միայն քաոսը կար, ուսկից յառաջ եկան Գէա, Էրոս եւ Տարտարոս. եւ անոնց մէջէն ամէնէն նշանաւորն ու հզօրը Էրոս էր։ Այս վարդապետութեան նոր երանգ մը տուին որփիկանները, որոնց կարծիքով ամենապարփակ խաւարէն՝ որ հաւասար է քաոսի, յառաջ եկաւ նախ Էրոս, որ իր աստուածային ամենակերտ ուժով աշխարհքս կազմեց եւ ձեւի բերաւ։ Այսպիսի նկարագրով բնաստուած մը ուշ թէ կանուխ կրնար շատ դիւրաւ նաեւ մեռնելու եւ վերստին կենդանանալու տեսագծերով ճոխանալ, վասն զի իրմէ կազմուած բնութիւնն ալ ըստ նախամարդուն բնահայեացքին շարունակ կը մեռնի եւ կը վերակենդանանայ։

Ասիկա կ'աշխատի ապացուցանել J. Boehlau իր վեր յիշուած յօդուածով։ Ամենամեծ

1 Philologus, 1901, էջ 321։

2 Rocher I, 1339 ff.

3 Rocher I, անդ։

© National Library of Armenia